

# ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆԻ "ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ" ԳԻՐՔԻՆ ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայկաշեն Ուզունեանի "Յուշամատեան Մելգոնեան կրթական հաստատութեան" հատորը, հրատարակուած Հայաստանի "Ազգ" օրաթերթին կողմէ (2004) յուշագրութիւն մըն է առաւելաբար այն հինգ տարիներու շրջանին մասին գոր հեղինակը անցուցած է Մելգոնեանի մէջ, 1933-էն 1938: Իբրեւ որք պատանի մը Կիպրոս եկած է ան, երբ 13 տարեկան էր, ու տեսաբար մնացած է հաստատութեան մէջ մինչեւ իր շրջանաւարտ ըլլալը:

Յետագային ալ, սակայն, իբրեւ անդամ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան կեդրոնական վարչական ժողովի եւ փոխնախագահ միութեան, միշտ առիթը ունեցած է շատ մօտէն հետեւելու հաստատութեան կեանքին ու քաջատեղեակ ըլլալու անոր բոլոր անցուդարձերուն:

Թէեւ գիրքը առաւելաբար նկարագրութիւնն է անդարձ պատանեկութեան մը, ապրուած Մելգոնեանի մէջ, որ հեղինակին համար եղած է "հարազատ տուն" եւ ուր իր ապրումներէն մնացած են "միայն երջանիկ կեանքի մը թաւալումը պատկերող յիշատակներ", ան գրուած է զուսպ, ժուժկալ, կշռադատ ու խոհական ոճով մը, առանց երբեք զգացական զեղումներու: Գիրքը ճոխացած է լուսանկարներով, նամակներէ, ելոյթներէ եւ յօդուածներէ առնուած մէջբերումներով ու հաստատութեան "Այգ" պարբերաթերթերէն արտատպումներով, մէկ խօսքով՝ վաւերագրերով:

Այս յուշամատեանը, ուրեմն, թանկագին վկայութիւն մըն է 78-ամեայ լուսոյ տաճարի մը, կրթական հաստատութեան մը մասին, որ սերտօրէն առնչուած է հեղինակին կեանքին ու կրնայ ծառայել իբրեւ սկզբնաղբիւր Մելգոնեանի պատմութեան:

Զոհաբերութեամբ ու նուիրումով ծառայող իրենց կրթական մշակներուն կը վերագրէ հեղինակը այդ շրջանին տիրող դպրոցական մթնոլորտը, ուր ասուլիսներ, գրական երեկոններ ու մշակութային ձեռնարկներ կը յաջորդէին

իրարու, ընթերցանութեան անյագուրդ ծարաւ մը կը տիրէր ու գրադարանի գիրքերը ձեռքէ ձեռք կը յափշտակուէին: Մեր մեծագոյն գրողներէն նախ Օշականը եւ ապա Թեքէեանը եղած են հայ գրականութեան ուսուցիչ: Իսկ յետագային ժամանած շատ երիտասարդ Վահէ-Վահեանին ստեղծած խանդավառութեան շնորհիւ սկսած է լոյս տեսնել աշակերտական "Այգ" պարբերաթերթը, ուր ուսանողներ առիթը ունեցած են գրական իրենց առաջին քայլերը նետելու:

Հայեցիութեամբ շնչող այս մթնոլորտի ստեղծման մէջ իրենց մեծ բաժինը ունեցած են տնօրէններ Գրիգոր Կիրակոսեան ու Յակոբ Թոփճեան, տեսուչ Պօղոս Գեորգեան, ուսուցիչներ եւ դաստիարակներ Բարունակ Թովմասեան, Յովհաննէս Շեօհմելեան, Մելքոն Քրիշճեան, Օննիկ Աւետիսեան եւ ուրիշներ: Այդ դաստիարակներն էին, որոնք, համաձայն հեղինակին, իրենց աշակերտներուն ազգային հետաքրքրութիւնը արթնցուցած, անոնց սիրտին ու միտքին մէջ հայ ժողովուրդին հանդէպ պարտաւորութեան ու պարտականութեան գիտակցութիւնը գետեղած ու զանոնք ազգային ծառայութեան մղած են:

Հեղինակը յաջողած է այդ շրջանի գրեթէ բոլոր կրթական մշակներուն ու իր դպրոցական ընկերներուն կերպարները ուրուագծել մի քանի նախադասութեամբ ու զանոնք ներկայացնել կենդանի ու տպաւորիչ: Այս՝ գիրքին ընթերցումը կ'ընէ առաւել հետաքրքրական ու պիտի նպաստէ անտարակոյս սփիւռքահայ կրթական գործին ապագայի պատմագրութեան:

Նկարագրուած շրջանին Մելգոնեանը եղած է կեդրոնաձիգ ոյժը ոչ միայն կիպրահայ գաղութին, այլ նաեւ ամբողջ կղզիին: "Ամէն օր, ամէն ժամ" աշակերտներուն հետ եղող ու յոգնիլ չգիտցող Լեւոն Աբգարեանի պատրաստած մարգահանդէսները եւ ամբողջ Կիպրոսի մէջ սիրուած ու փնտռուած երաժշտութեան ուսուցիչ Վահան Պետելեանի կազմակերպած համերգները, որոնց ներկայ կ'ըլլային նախ կղզիին անգլիացի կառավարիչն ու պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, կղզիին ուշադրութիւնը կը հրաւիրէին Մելգոնեանի վրայ: Հեղինակը բազմաթիւ մեջբերումներ ունի Կիպրոսի յունական թերթերէն, որոնք բացարձակ հիացումով արտայայտուած են հաստատութեան այս ձեռնարկներու բարձրարուեստ մակարդակին եւ ուսանողութեան ցուցաբերած կարգապահութեան մասին:

Մշակոյթի այս դարբնոցին մէջ է որ իրագործուած է, մեծ չափով, հաստատութեան բարերարներուն երազը՝ Մելգոնեանի որբերէն պատրաստելու հայ ոգիով թրծուած ու հայ կեանքի վերագարթնումին նուիրուած սերունդներ՝ որպէս փոխվրէժ ցեղասպանութեան:

Հեղինակը վճռականութեամբ կը շեշտէ, թէ մելգոնեանցիներու հարուստ հունձքը Եղեռնէն ետք տասնամեակներ շարունակ անձնուիրաբար ծառայած է մեր ժողովուրդին՝ իբրեւ երիտասարդական կեդրոններու պատասխանատու, խմբագիր ու մասնաւորաբար իբրեւ ուսուցիչ՝ թիթեղածածկ ու փայտաշէն բայց նուիրական կառոյցներու մէջ, յաճախ չափազանց համեստ վարձատրութիւնով, հայ գիտակցութիւնը տարածելու համար նոր սերունդներուն մէջ:

Ու մեր ժողովուրդը շնորհակալ եղած է մելգոնեանցիին:

Իսկ մելգոնեանցին՝ միշտ երախտապարտ մնացած է իր կրթարանին: Գիրքը լեցուն է վկայութիւններով: Ենովա Աթթարեան (Պետեան), 1938-ին Հալէպէն գրած իր նամակով Մելգոնեանը նկարագրած է իբրեւ "սիրելի՛ աւելի քան իմ հօրենական տունս...": Տոքթ. Տիգրան Ալեքսանեան, ներկայիս Միլան, նախախնամութեան պարգեւը նկատած է ըլլալ սաներէն մէկը "Մելգոնեան երկնառաք հաստատութեան", որուն ջամբած հայեցի տոհմային դաստիարակութեան շնորհիւ է որ դարբնուած է իբրեւ իսկական հայ: Թերեւս ամէնէն յուզիչը՝ 1939-ին գրուած մի քանի տողերն են հալէպցի Ազատ Եափուճեանին կողմէ, որուն համար Մելգոնեանը իր զգացումներուն ու մտածումներուն անբաժանելի մէկ մասը եղած է: Աշխատած է Հալէպի մէջ տարածել Մելգոնեանի մշակոյթը, իր պարերով, երգերով: Ու աւելցուցած է իր նամակին մէջ, թէ իր աշակերտները երեկոյեան արձակուելու ատեն իրեն մնաք բարով ըսելէ վերջ չէին մոռնար "խոնարհութիւնով մը հրաժեշտ առնել նախ դասարանին վրայ իշխող ոգիէն՝ Նուպար Փաշայի լուսանկարէն":

Գիրքին մէջ բազմիցս բացայայտուած է այն միտքը, թէ մեր ժողովուրդը, սփիւռքի թէ հայրենիքի մէջ, միշտ գնահատած է ու տակաւին կը գնահատէ Մելգոնեանի դերը՝ հայեցի կրթութեամբ զինուած ու ազգային ծառայութեան նուիրուած հայ սերունդներու պատրաստութեան մէջ: Այսպէս, հեղինակին ուսանողութեան տարիներուն, Եգիպտոսի մէջ մահացած բարերար Կարապետ Մելգոնեանի համար Նիկոսիոյ մէջ կազմակերպուած յուղարկաւորութիւնը,

1934 օգոստոս 10-ին, կը կատարուի մեծաշուք, ազգային տարողութեամբ: Կը նախագահեն Կիլիկիոյ Սահակ Բ. Հայրապետը եւ Աթոռակից Բարգէն Կիլեսերեան կաթողիկոսը, իսկ թաղման արարողապետը կ'ըլլայ Կիպրոսի առաջնորդ Պետրոս արք. Սարաֆեան: Բարերարը կը թաղուի հաստատութեան երկու մեծակառոյց շէնքերուն մէջտեղ ու կը դառնայ, հեղինակին բառերով, յաւերժութեան ճանապարհորդ իր զաւակներուն ամենօրեայ ներկայութեան: Յետագային Եգիպտոսէն կը բերուին նաեւ Գրիգոր Մելգոնեանի աճիւնները:

Մելգոնեանին, մելգոնեանցիներու դերը արժեւորուած է նախ հայրենիքին կողմէ: Հաստատութեան 60-ամեակը, 1986-ին, շքեղօրէն տօնուած է, Նիկոսիոյ տօնակատարութիւններէն յետոյ, նաեւ Հայաստանի մէջ, ուր հրաւիրուած է հաստատութեան երգչախումբը: Հեղինակը կը մատնանշէ, թէ այս պատիւին սփիւռքէն առաջինը արժանացած է, արդարօրէն, Մելգոնեան կրթական հաստատութիւնը:

Գիրքին մէջ տեղ տրուած է նաեւ Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնական վարչական ժողովի մէկ որոշումին, որուն համաձայն Մելգոնեանը պէտք է դուրս գար այլեւս որբանոցային իր պայմաններէն ու պէտք է կառուցուէին նոր ննջարաններ ու ճաշարան՝ կեանքի արդի պայմաններուն յարմար: Նախ պիտի շինուէին եկամտաբեր կառոյցներ: Այս վերջինները մինչեւ օրս կ'ապահովեն շատ կարեւոր եկամուտ մը հաստատութեան: Այս որոշումներուն գործադրութեան մղիչ ոյժը եղած է հեղինակը, իր հետեւողական ջանքերով ու իր ազդեցութեամբ, իբրեւ փոխ-նախագահ Հ. Բ. Ը. միութեան եւ իբրեւ Միութեան կալուածներուն ընդհանուր պատասխանատու:

Պէտք է հոս աւելցնել, թէ թափանցիկութեան գնահատելի սկզբունքով մը, վերոյիշեալ բոլոր շինութիւններուն մանրամասն հաշուեցոյցը ներկայացուած է ընթերցողին:

Մելգոնեանի փակման հեռանկարով յուզումնալի այս տարեշրջանին, հեղինակը չէր կրնար չանդրադառնալ կրթական այս օջախին այժմու իրավիճակին: Գիրքին վերջին բաժինին մէջ տեղ գտած են 2003-2004-ին գրուած իր երեք ընդարձակաձաւալ յօդուածները այս մասին: Համոզումով ու հաստատակամ կը հաստատէ ան, թէ մեր նոր սերունդներուն հայաշունչ

ամբողջական կրթութիւն տալու միակ յարմար պայմանը՝ Մելգոնեան Հաստատութեան գոյատեւումն է Կիպրոսի մէջ, քանի որ միւս բոլոր միջոցները, որքան ալ գնահատելի, "կիսամիջոցներ" պիտի ըլլան: Ան կը պնդէ, թէ ամբողջ մեր ժողովուրդը, սփիւռքի տարածքին թէ հայրենիքի մէջ, Մելգոնեանի փակումը կը նկատէ համազօր "աղէտի մը":

Այս առնչութեամբ անսահման ցաւով կը նշէ Հ. Բ. Ը. միութեան կեդրոնական վարչութեան 1996-ին Լոս Անճելըսի մէջ առած որոշումը, որով Բարեգործականի անդամակցութիւնը զրկուեցաւ Միութեան որոշումներուն մէջ իր ձայնը լսելի դարձնելու, Կեդրոնական վարչական ժողովի անդամները ընտրելու նուիրական իր իրաւունքէն: Հ. Բ. Ը. միութիւնը այս ձեւով վերածուեցաւ հիմնարկութեան մը՝ խզուած իր անդամակցութենէն ու զրկուած ժողովրդային իր թիկունքէն ու խանդավառութենէն: "Ջլատիչ" կը նկատէ ան Մելգոնեանի նման ազգային հաստատութիւնը փակելու որոշումը, որովհետեւ այդ պիտի կազմալուծէ ու բարոյագրկէ Միութեան բոլոր շրջանակներն ու անդամակցութիւնը:

Հեղինակը իր այս գիրքը կոչած է "Յուշամատեան": Բայց շատ աւելին է ան: Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար զայն կոչել "Յուշարձան Մելգոնեան Կրթական Հաստատութեան". յուշարձան այն դարբնորցին, որ բարերարներուն տեսիլքով եղաւ մեր Յեղասպանութեան ամենէն ազնիւ վրէժը սփիւռքի մէջ ու վկայութիւնը հայուն հայօրեն ապրելու անխորտակելի ոգին:

Այս յուշամատեանը կարելի է նկատել նաեւ յուշարձան մը հեղինակին, որ թերեւս բարերար Կարապետ մելգոնեանի երազած Մելգոնեանցին է:

Իր սերունդէն շատերուն նման որբացած շատ կանուխէն, ան չէ ճանչցած իր ծնողները, ոչ ալ լուսանկարներ մնացած են իրենցմէ: Բեռնատար նաւու մը կամրջակին վրայ ճամբորդելով Լաթաքիայէն եկած է Մելգոնեան: Զգացած է ճնշումը, առաջին օրերուն, բացարձակ առանձնութեան, քանի որ "չկար ծնողք, չկար ազգական, որ ուղղութիւն տար կամ թելադրէր իմ ընելիքներս": Մելգոնեանի մէջ կազմաւորուած, Մելգոնեանէն ստացած իր ակեժքները եւ եղած է բուն հաւատացող մը տոհմային կրթութեան ու իր ժողովուրդի ծառայութեան:

Հայկաշէն Ուզունեան ծառայած է իր ժողովուրդին՝ Հայկական քարեգործական ընդհանուր միության, Թէքէեան Մշակութային միութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան ճանապարհով, հասնելով բարձրագոյն դիրքերու եւ արժանանալով Սբ. Էջմիածնի ու Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն շքանշաններուն ու Հ. Բ. Ը. Միութեան "Ալեք Մանուկեան" մրցանակին:

"Այգ" պարբերաթերթերու 1938-ի Ապրիլ-Մայիսի թիւին մէջ, երբ տակաւին տասնութամեայ Թ. դասարանի ուսանող էր ան, գրած է.

"Մարդիկ կան, որոնք հասած փառքերու, կը մոռնան հայրենիք ու ազգ, եւ կը խուսափին ցեղը յատկանշող ո՛րեւէ շարժումէ: Օտար երկիրներու մէջ, ուժի եւ անունի տէր՝ չեն ուզեր ըմբռնել գոյութիւնը ժողովուրդի մը, որ իրե՛նցն է...":

Ուզունեան ոչ թէ չէ մոռցած երբեք մեր ազգային արժէքները, այլ հայրենիքի, ազգի, հայ մշակոյթի ու հայեցի կրթութեան գաղափարները իր էութեան մէջ կրած է իբրեւ մտասէւեռում: Ա՛յս կը վկայէ իր կեանքը ամբողջ: Ա՛յս կը վկային նաեւ մեր բառն ու բանը, մեր գիրը, դպրութիւնը քաջալերելու միտող 1966-էն ի վեր իր յատկացուցած ու իր անունը կրող գրական տարեկան մրցանակները եւ իր խիզախ ու անվեհեր ջատագով մը Մելգոնեան կրթական հաստատութեան գոյատեւումին՝ իբրեւ գիշերօթիկ երկրորդական վարժարան՝ Կիպրոսի բարենպաստ պայմաններուն մէջ:

***ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊԵԱՆ-ԷՔՄԵՔՃԵԱՆ, Լիմասոյ, Կիպրոս***